Արձանագրություն 2

Ծնողական խորհրդի արտահերթ նիստը տեղի ունեցավ 2021թ. հոկտեմբերի 6- ին:

Նիստին ներկա են հ. 186 հիմնական դպրոցի ծնողական համայնքը, ծնողական խորհրդի 35 անդամներից 34-ը , դպրոցի տնօրենի ժ/պ Մ. Հուսեփյանը, հավակնորդ Մարինե Քոչարյանը:

Օրակարգում՝

1. Կազմակերպչական հարցեր:

Զեկուցող՝ Մ. Հուսեփյան

2. 2021 – 2026 թթ զարգացման ծրագրի ներկայացում, քննարկում:

Զեկուցող՝ Մ. Քոչարյան

3. Փակ քվեարկության իրականացում:

Զեկուցող՝ Մ. Հուսեփյան

1. **Լսեցին** - Օրակարգի 1-ին հարցի շուրջ տնօրենի ժ/պ Մ. Հուսեփյանի զեկուցումը:

Մ. Հուսեփյանը նշեց, որ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.02.2021թ.N161-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգի 13,14,15,16,17 կետերը, դպրոցի ծնողական խորհուրդը պետք է լսի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդի (հավակնորդների) ներկայացրած զարգացման ծրագիրը (ծրագրերը): Նա նշեց, որ տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթին մասնակցելու համար սահմանված ժամկետում ՝ 2021թ. սեպտեմբերի 9-ից մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը, դիմել է մեկ հավակնորդ՝ Մարինե Հենրիկի Քոչարյանը՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը: Հավակնորդ Մարինե Հենրիկի Քոչարյանի կողմից ներկայացված զարգացման ծրագիրը կառավարման խորհուրդը հ.186 հիմնական դպրոցի պաշտոնական կայքում տեղադրել է հայտը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ 01.10.2021 թ-ին:

Քննարկման արդյունքում ծնողական խորհուրդը պետք է իրականացնի փակ քվեարկություն, որի ընթացքը և արդյունքները արձանագրվելու են և քվեաթերթիկների հետ պահպանվելու են դպրոցում: Քանի որ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթին դիմել է մեկ հավակնորդ, ապա քվեարկության ընթացքում ծնողական խորհրդի անդամները քվեարկում են « կողմ» կամ «դեմ»: Որոշումն ընդունվում է առավելագույն ձայների հիման վրա, իսկ ձայների հավասարության դեպքում հավակնորդը համարվում է չընտրված, և ծնողական խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար տվյալ մրցույթի ժամանակ չի ունենում իր թեկնածուն: Զեկուցողը նշեց՝ քանի որ կատարվելու է քվեարկություն, նաև պետք է ընտրվի հաշվիչ հանձնաժողով: Նշվեց նաև, որ զարգացման ծրագիրը ներկայացնելու համար հավակնորդին պետք է տրվի որոշակի ժամանակ, որը պետք է որոշվի հաստատության կողմից:

Արտահայտվեցին.- Կատարվեց մտքերի փոխանակություն: Առաջարկվեց իր զարգացման ծրագիրը ներկայացնելու համար հավակնորդին տրամադրել 45 րոպե ժամանակ: Առաջարկվեց նաև քվեարկության արդյունքների հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ 3 անդամից:

1.Շահվերդյան Լիլիթ

2. Սահակյան Մարինե

3. Մանուչարյան Լիանա

Որոշեցին– 1. Զարգացման ծրագիրը ներկայացնելու համար հավակնորդին տրամադրել 45 րոպե ժամանակ:

2. Ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Շահվերդյան Լիլիթ

2. Սահակյան Մարինե

3. Մանուչարյան Լիանա

3. Լսեցին.- Օրակարգի 2-րդ հարցի շուրջ հանդես եկավ Մ. Քոչարյանը: Նա սահիկաշարով մանրամասն ներկայացրեց 2021-2026 թթ դպրոցի զարգացման իր ծրագիրը: /2021-2026 թթ զարգացման ծրագիրը տեղադրված է դպրոցի պաշտոնական կայքում/:

Արտահայտվեցին.- Կատարվեց մտքերի փոխանակություն, քննարկվեց հավակնորդի կողմից ներկայացված ծրագիրը, տրվեցին հարցեր, հնչեցին հարցերի ամբողջական պատասխանները:

Որոշեցին – 1. Հավանություն տրվեց Մարինե Հենրիկի Քոչարյանի կողմից ներկայացված 2021-2026թթ զարգացման ծրագրին:

3.Լսեցին – Օրակարգի 3-րդ հարցի շուրջ հանդես եկավ Մ. Հուսեփյանը: Նա նշեց, որ համաձայն վերոնշյալ կարգի 15-րդ կետի հավակնորդի կողմից ներկայացրած զարգացման ծրագիրը քննարկելուց հետո ծնողական խորհուրդը պետք է իրականացնի փակ քվեարկություն:

Կատարվեց քվեարկություն: Հաշվիչ հանձնաժողովի կողմից կատարվեց արդյունքների ամփոփում:

Որոշեցին- 1. Հաստատել ծնողական խորհրդի մասնակցությամբ հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված քվեարկության արդյունքները.

Կողմ – 34 ձայն

Դեմ - 0 ձայն

2. Հավակնորդ Մարինե Հենրիկի Քոչարյանին համարել հ. 186 հիմնական դպրոցի տնօրենի ծնողական խորհրդի թեկնածուն:

Նիստի նախագահ՝ /Լ. Շահվերդյան/

Քարտուղար՝ /Հ. Մանուչարյան/